# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.12.2020թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/99**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ ոստիկանության կարիքների համար բջջային հավելվածների ծրագրային ապահովման մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԵՄԾՁԲ-2020-ԲՋՋ-54» ծածկագրով երկփուլ մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 08.12.2020թ. ներկայացված (11.12.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/99 բողոք), պարզեցի հետևյալը.

**1. <u>«Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Լոկատոր» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 08.12.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի օգոստոսի 25-ին ՀՀ Ոստիկանության կարիքների համար հայտարարվել է ՀՀ Ո ԵՄԾՁԲ-2020-ԲՋՋ-54 ծածկագրով երկփուլ մրցույթի միջոցով բջջային հավելվածների ծրագրային ապահովման մշակման ծառայություններ ձեռքբերելու նախավորակավորման ընթացակարգի հրավեր (երկփուլ մրցույթի հանձնաժողովի 19.11.2020թ. թիվ 1 որոշմամբ), որի արդյունքում արձանագրվել է հինգ ընկերությունների

մասնակցություն: Բոլոր ընկերությունների հայտում ներկայացված փաստաթղթերը համապատասխանում էին հրավերի պահանջներին, ինչի արդյունքում բոլոր մասնակիցները ճանաչվեցին նախավորակավորված:

Նշված մրցույթի առաջին փուլի հրավերը փաստաթղթային ձևով ուղարկվել է արդեն իսկ նախավորակավորված մասնակիցներին (էլ. փոստի միջոցով) սույն թվականի սեպտեմբերի 22-ին: Հայտերի բացումը տեղի է ունեցել հոկտեմբերի 12-ին, նշված փուլին հայտ են ներկայացրել երեք ընկերություն, որոնք հայտերի բացումից հետո հրավիրվել են միաժամանակյա բանակցությունների: Բանակցությունների արդյունքում հանձնաժողովի կողմից կազմվել է մեկ ընդհանուր տեխնիկական բնութագիր: Հաստատված տեխնիկական բնութագրով մրցույթի երկրորդ փուլի հրավերն ուղարկվել է մասնակիցների էլ. փոստին սույն թվականի նոյեմբերի 19-ին, որի բացումը տեղի կունենա դեկտեմբերի 9-ին, ժ 10:30-ին:

Գտնում ենք, որ մրցույթի հրավերում նշված որոշ դրույթներ չեն համապատասխանում գնումները կարգավորող օրենսդրության պահանջներին, այն է՝

Համաձայն գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, 2017թ.-ի մայիսի 4-ի n 526-ն որոշման VII կետի 9-րդ ենթակետի, որում նշված է՝ «Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով»:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նշում ենք, որ ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված «ՀՀ Ո ԵՄԾՁԲ-2020-ԲՋՋ-54» ծածկագրով մրցույթի երկրորդ փուլի Հրավերի՝ մասնավորապես Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ծառայության ընդհանուր գինը հստակ նշված է 360 000 000 ՀՀ դրամ, իսկ ծառայության մատուցման ժամկետը՝ 01.01.2021թ մինչև 31.12.2025թ, ինչն էլ իր հերթին ենթադրում է, որ առկա են ֆինանսական միջոցներ և համաձայն վերոնշյալ որոշման մրցույթի մասնակցից պետք է պահանջվի հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի տեսքով, ինչը մրցույթում բացակայում է»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է.

1. Պարտավորեցնել «ՀՀ Ո ԵՄԾՁԲ-2020-ԲՋՋ-54» մրցույթի գնահատող հանձնաժողովին հրավերում կատարել փոփոխություն և այն համապատասխանեցնել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջներին:

2. Առաջին պահանջի անհնարին լինելու դեպքում «ՀՀ Ո ԵՄԾՁԲ-2020-ԲՋՋ-54» ծածկագրով մրցույթի հանձնաժողովին պարտավորեցնել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելուն:

Այնուհետև՝ 14.12.2020թ., Ընկերության կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է գրություն, համաձայն որի՝ խնդրել է «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 08.12.2020թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**<u>2. ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 18.12.2020թ. թիվ 3/27/56145-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար սույն թվականի օգոստոսի 25-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԵՄԾՁԲ-2020-ԲՋՋ-54» ծածկագրով երկփուլ մրցույթի միջոցով բջջային հավելվածների ծրագրային ապահովման մշակման ծառայություններ ձեռքբերելու նախավորակավորման ընթացակարգ:

Ի պատասխան «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի՝ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի, եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում: Ուստի, պայմանավորված այն հանգամանքով, որ մրցույթը իրականացվել է «Գնումների մասին»

ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, այդ իսկ պատճառով հայտի ապահովում չի պահանջվել:

Միաժամանակ, անդրադառնալով «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից շեշտադրված մրցույթի ընդհանուր գին սահմանված 360 000 000 ՀՀ դրամ գնին, հայտնում ենք, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 19.11.2020թ. ներկայացված պարզաբանմանը մեր կողմից պատասխանվել է, որ վերը նշված գումարը համարվում է կանխատեսվող եկամուտ մեկ տարվա ընթացքում, որը պետք է գոյանա պայմանագիրը կնքվելուց հետո կատարողի կողմից մատուցված ծառայությունների արդյունքում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.12.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

**3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/99 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲՔԱ-ՆԳ-2020/99 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կարիքների համար բջջային հավելվածների ծրագրային ապահովման մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԵՄԾՁԲ-2020-ԲՋՋ-54» ծածկագրով երկփուլ մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լոկատոր» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածի՝ պայմանագրի նախագծի (հետայսու Պայմանագիր) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ով որպես ծառայության մատուցման ժամկետ սահմանվել է 01.01.2021թ մինչև 31.12.2025թ:

3. Ընթացակարգի հրավերում առկա չէ նշում կանխավճարի հատկացման և դրա առավելագույն չափի մասին, այսինքն՝ կանխավճար նախատեսված չէ:

4. Պայմանագրի նախագծով վճարման ժամանակացույց չի սահմանվել:

**5.** Պայմանագրի նախագծի 7-րդ կետի 7.15 կետով սահմանվել է, որ **Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե**

**այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:**

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 08.12.2020թ. ներկայացրած բողոքը և բողոքը առանց քննության թողնելու 14.12.2020թ. միջնորդությունը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) **32-րդ կետի 20-րդ**

**<u>ենթակետով սահմանվում է՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում</u>**՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ:

Ընկերության կողմից 14.12.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է միջնորդություն, համաձայն որի՝ խնդրել է «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 08.12.2020թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, հաշվի առնելով «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 08.12.2020թ. ներկայացված՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/99 բողոքն առանց քննության թողնելու մասին միջնորդությունը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 22-րդ կետը, ***15.12.2020թ. որոշում է կայացրել ԳԲՔԱ-ՆԳ-2020/99 բողոքը որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ համարելու վերաբերյալ:***

Այսպես, ՀՀ ոստիկանության կարիքների համար բջջային հավելվածների ծրագրային ապահովման մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԵՄԾՁԲ-2020-ԲՋՋ-54» ծածկագրով երկփուլ մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լոկատոր» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 10-րդ կետի 10.4 ենթակետի համաձայն՝ **<u>եթե գնման ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:</u>**

Ընթացակարգի հրավերում ներառված Պայմանագրի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ով որպես ծառայության մատուցման ժամկետ սահմանվել է 01.01.2021թ մինչև 31.12.2025թ:

Ընթացակարգի հրավերում առկա չէ նշում կանխավճարի հատկացման և դրա

առավելագույն չափի մասին, այսինքն՝ կանխավճար նախատեսված չէ:

Պայմանագրի նախագծով վճարման ժամանակացույց չի սահմանվել:

Պայմանագրի նախագծի 7-րդ կետի 7.15 կետով սահմանվել է, որ **Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:**

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ հաստատվում է, որ Ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, հետևաբար Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերով հայտի ապահովում ներկայացնելու պահանջ չսահմանելն իրավաչափ է և բխում է Օրենքով ու Կարգով սահմանված իրավական նորմերի պահանջներից:

Ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 08.12.2020թ. ներկայացված բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 08.12.2020թ. ներկայացված բողոքը՝ որպես 15.12.2020թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ, մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**